

էֆէնտիի տունն ի Սկիւտար, կամ, անկէ օրինակուածը՝ Հիւանդանոցի ընդունելութեան սրահը:

Այսպէս, վաւերական ամիրաներուն իբրեւ վերջինն եղաւ Ճարտարապետ Կարապետ ամիրան Պալեան, որդի Պալեան Գրիգոր ամիրայի եւ ազգեցիկ չայրը վաղածեռիկ Նիկողոս եւ Յակոբ Պէյերու Պալեան՝ չայր եւ որդիք ճարտարապետոզք Տումապահէի ու Ջրաղանի դիւթական պալատներու եւ ամէնն ալ սերունդ՝ անցեալ դարին սկիզբները Պոլիս հկող Բաքերդցի Պալի խալֆային:

Ամիրաներուն իբրեւ վերջինն՝ ինք. իսկ առաջինը, իսկ անոնց սկիզբը, ծագումը: Կորդեան Նանգոյց, Կրեւտոսի՝ առեղծուած, ծագումը՝ մոլթ է շատ մոլթ, նահապետներէն ալ մոլթ. այնպէս որ քանի տղայանանք հոս եւ որչափ ալ ծերանանք՝ չենք կըրնար ըսել կարգ մը բաներ՝ նիւթ չայթայթելու համեմատական ամիրայաբանութեան ալ, ինչպէս տասնիններորդ դարու մօտան էր, ամէն բանին՝ նոյն իսկ Բացարձակին անգամ՝ համեմատականն ստեղծել, երեւակայել, քննել ու բանաբնել եւ քննափետել անգամ:

Սակայն ես՝ ալ ծերացայ, պատմական պատրաստութեան մը համար, յիշատակարան նայելէն, ծերունիներն հարցասիրելէն, ու ձեռք բերած արդիւնքս՝ չփոխարինէր այժմ յոգնութեանցս գոնէ հարիւրին տասն իսկ: Հոս շոգիացած, չոն կարծրացած վիճատառած այդ քրտինքներէս՝ ինչ որ կըրնամ քամել ու համարուտել, կը սերմանեմ ահա պատմական առեանը՝ սամիայն խնդրելով որ, ըստ աւանդական ծոյլ սովորութեան, ինք բանաբաղողն ալ գէթ ճանչնայ ու խոստովանի անոնց յարգն ու հանածոյ աշխատութեանս արժանիքը. չտպիրխտանայ ընկերչակօրէն՝ կարգ մը հաշիւ բանավաճառներու պէս, որոնք սիրեցի՛ հս քան զեղբայր, որոնցմէ խաբուեցայ՛ դարձեալ ես քան զկոյր: